


ՊԱՐԺԵՆԿՈՏ ՆԱԴԱՍՏԱԿԸ



ՊԵՏՐԱՆ



Պատ. խմբագիր՝ Հ. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Գասպարյան
Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան

38-Λ
Նա2183
891.715
4-23

16 NOV 2011

ՊԱՐԾԵՆԿՈՏ ՆԱՊԱՍՏԱԿԸ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔՅԱԹՆԵՐ

Հաժախեց Ս. Ի. ԿԱՊԻՑԱՆ
Նկարները ՅՈՒ. ՎԱՍՆԵՑՈՎԻ

Գլավիտի լիազոր Ղ-3601 Հրատ № 4196.
Պատվեր 4. Տիրաժ 5000.
Տպագրական 1/4 մամ.
Մեկ մամ. 24199 նիշ. Հեղինակային 1 մամ
Հանձնված և արտադրության հունվարի 15 1938 թ.
Ստորագրված և տպագրության մարտի 31 1938 թ.
Գինը 1 Ռ.
Պետհրատի I տպարան, Յերեվան. Լենինի 65.

Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ՀԼԿԹԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
Յ Ե Ր Ե Վ Ա Ն
1 9 3 8

ՆԱՊԱՍՏԱԿԻ ՏՆԱԿԸ

Կային-չկային մի աղվես և մի նապաստակ:
Աղվեսն իր համար լուսավոր խրճիթ չինեց սառույ-
ցից, իսկ նապաստակը մութ խրճիթ՝ կեղևից:

Յեվ ահա, աղվեսն սկսեց ծաղրել նապաստա-
կին:

— Իմ տնակը լուսավոր է, իսկ քոնը՝ մութ: Իմը
լուսավոր է, քոնը՝ մութ:

Ամառը յեկավ և աղվեսի տնակը հալվեց: Աղ-
վեսը սկսեց խնդրել նապաստակին:

— Պատիկ նապաստակ, այ իմ նապաստակ, ի՞նչ
կլինի գոնե բակղ թողնես ինձ:

— Չե, այ աղվես, չեմ թողնի, — ինչո՞ւ եյիր ինձ
ծաղրում...

Աղվեսն սկսեց ավելի ու ավելի աղերսել: Յեվ
նապաստակը նրան թողեց իր բակը:

Մյուս որն աղվեսն ելի սկսեց խնդրել:

— Պատիկ նապաստակ, այ իմ նապաստակ, թող
ինձ քո շեմքում տեղավորվեմ:



59235,66

— Չե, չեմ թողնի: Ինչո՞ւ եյիր ինձ ծաղրում...
Աղվեսը խնդրեց, շատ խնդրեց և նապաստակը
նրան թողեց բարձրանա սանդուխքի գլուխը:

Մի որ ել անցավ: Աղվեսը նորից սկսեց խնդրել:

— Պատիկ նապաստակ, այ իմ նապաստակ թույլ
տուր ինձ տնակդ մտնեմ:

— Չե, չեմ թողնի: Ինչո՞ւ եյիր ծաղրում, թե
քո տնակը լուսավոր է, իսկ իմը՝ մութ:

Խնդրեց, շատ խնդրեց աղվեսը և աղերսելով
ուղածն ստացավ, — նապաստակը նրան տեղ տվեց
խրճիթում:

Աղվեսը տեղավորվեց նստարանին, իսկ նապաս-
տակը՝ վառարանի վրա:

Չորրորդ որը աղվեսն ելի սկսեց խնդրել:

— Պատիկ նապաստակ, այ իմ նապաստակ, ինձ
եյ թող քեզ մոտ՝ վառարանի վրա:

— Չե, չեմ թողնի: Ինչո՞ւ եյիր ծաղրում:

Խնդրեց, շատ խնդրեց աղվեսը և նապաստակը
նրան տեղ տվեց վառարանի վրա:

Անցավ մեկ որ, յերկրորդը — աղվեսն սկսեց
նապաստակին դուրս քշել տնակից:

— Դուրս կորիր, շղիկ, չեմ ուզում քեզ հետ
ապրել, կորիր:

Յեվ այդպես ել վռնեց նապաստակին:

Նստեց նապաստակը և լաց ե լինում, մորմոք-
վում է, թաթիկներով սրբում է արցունքը:

Սպիտակ կզաքիսն անցնում եր նրա մոտով:

— Ինչի՞ յես լալիս, պատիկ նապաստակ:

— Ել վոնց լաց չլինեմ: Ինձ մի խրճիթ ունեյի,
կեղեվից եր, իսկ աղվեսինը՝ սառույցից: Գարունը
յեկավ, աղվեսի խրճիթը հալվեց: Խնդրեց ինձ,
տեղավորվեց իմ տնակում, իսկ հետո ինձ դուրս
վռնեց:



Լաց մի լինի,—ասաց սպիտակ կզաքիսը,—յես
աղվեսին դուրս կանեմ:

Մոտեցավ կզաքիսը տնակի շեմքին և վոնց ե
բլբլացնում:

Բրոոո... բո... կորի՛ր վառարանի վրայից, աղ-
վես:

Իսկ աղվեսը պատասխանեց նրան՝

— Ս,յ դու կաթնակեր: Յեկել ե ուրիշի տանը
կարգադրություններ ե անում:

Դուրս կցատկեմ,

Վրա կտամ,

Ծվեններդ


Քամուն կտամ:

Վախեցավ սպիտակ կզաքիսը և փախավ:

Նապաստակը նորից նստեց ու լաց ե լինում:

Նրա մոտով շներ եյին վազում:

— Հաֆ, հաֆ, պստիկ նապաստակ ինչո՛ւ յես
լալիս:



— Ել վոնց լաց չլինեմ: Ինձ մի խրճիթ ունեյի,
կեղևից եր, իսկ աղվեսինը՝ սառույցից: Գարունը
յեկավ—աղվեսի խրճիթը հալվեց, Խնդրեց ինձ, տե-
ղավորվեց իմ տնակում, իսկ հետո ինձ դուրս
վռնդեց:

— Լաց մի լինի,—ասացին շները,—մենք նրան
դուրս կանենք:

— Չե, չեք կարող դուրս անել: Սպիտակ կզա-
քիսն ել ուղեց դուրս անի, չկարողացավ, դուք ել
չեք կարող:

— Չե, դուրս կանենք:

Շները մոտեցան խրճիթին:

— Հաֆ, հաֆ, հաֆ, դուրս կորի՛ր, աղվես:

Իսկ աղվեսը վառարանի վրայից պատասխանեց
նրանց:

Դուրս կցատկեմ,

Վրա կտամ

Ծվեններդ

Քամուն կտամ:

Վախեցան շները և փախան:

Նապաստակը նորից նստել ու լաց ե լինում:

Գայլն անցնում եր նրա մոտով,

— Պստիկ նապաստակ ինչո՛ւ յես լալիս:

— Ել վոնց լաց չլինեմ, մոխրագույն գայլ, ինձ





մի խրճիթ ունեյի կեղեկից եր, իսկ աղվեսինը՝ սառույցից: Գարունը յեկավ—աղվեսի խրճիթը հալվեց: Խնձրեց ինձ, տեղավորվեց իմ տնակում, իսկ հետո ինձ դուրս վռնդեց:

— Լաց մի լինի, յես նրան հենց հիմա դուրս կանեմ,—ասաց գայլը:

— Չե, չես կարող: Սպիտակ Կզաքիսը փորձեց,—չկարողացավ, շները փորձեցին—չկարողացան, դու ել չես կարող:

— Չե, դուրս կանեմ:

Գայլը մոտեցավ խրճիթին և ահեղ ձայնով վռոնաց:

— Ա. հւ. հւ. հւ... ա. հւ. հւ. հւ... դուրս կորի՛ր աղվես:

Իսկ աղվեսը դռան հետևից պատասխանեց նրան.

— Այ դու, մոխրագուլշն սոված գայլ: Քոնը գառներ փախցնելն ե, դեռ յեկել ե այստեղ կարգադրություն ել ե անում:

Դուրս կցատկեմ,

Վրա կտամ,

Ծվեններդ

Քամուն կտամ:

Գայլը վախեցավ ու փախավ:



Նապաստակը նորից նստել ու լաց ե լինում:

— Գալիս ե պառավ արջը:

— Պատիկ նապաստակ, ինչո՞ւ յես լալիս:

— Ել վոնց լաց չի՛նեմ: Ինձ մի խրճիթ ունեյի՛ կեղեկից եր, իսկ աղվեսինը՝ սառույցից: Գարունը յեկավ, աղվեսի խրճիթը հալվեց: Խնձրեց ինձ, տեղավորվեց իմ տնակում, իսկ հետո ինձ դուրս վռնդեց:

— Լաց մի լինի, պատիկ նապաստակ,—ասաց արջը,—յես նրան դուրս կանեմ:

— Չե, չես կարող: Կզաքիսը ուզեց դուրս անել—չկարողացավ, շները չկարողացան, գորշ գայլը չկարողացավ: Դու ել չես կարող:

— Չե, կարող եմ:

Արջը գնաց խրճիթի մոտ ու մոնչաց. բը՛ռոթ... բը՛ռոթ... դուրս կորի՛ր, աղվես:

Իսկ աղվեսը վառարանի վրայից պատասխանեց նրան.

— Այ դու քավթառ արջ, քոնն այն ե կով ու չոչխար խեղդես: Մի տեսեք, յեկել ե ինձ խրճիթից դուրս անի...

Դուրս կցատկեմ,

Վրա կտամ,


Ծվեններդ

Քամուն կտամ:

Արջը վախեցավ ու հեռացավ:

Նապաստակը նորից նստել ե ու լաց ե լինում: Գալիս ե աքլորը՝ գերանդին ուսին:

— Ծուղրուղո՞ւ... ինչո՞ւ յես լալիս, պատիկ նապաստակ:



— Ել վոնց լաց չլինեմ, աքլորիկ, ինձ մի խրճիթ ունեյի կեղևից եր, իսկ աղվեսինը՝ սառույցից։ Գարունը յեկավ—աղվեսի խրճիթը հալվեց։ Աղվեսը խնդրեց ինձ, տեղավորվեց իմ տնակում, իսկ հետո ինձ դուրս վոնդեց։

— Մի վշտանա, պստիկ նապաստակ, յես աղվեսին դուրս կանեմ։

— Ձե, չես կարող դուրս անել։ Սպիտակ կղաքիսն ուզեց դուրս անել—չկարողացավ, շները—չըկարողացան, գայլը—չկարողացավ, արջը—չկարողացավ։ Դու հո չես կարող ու չես կարող։

— Ձե, կարող եմ։

Աքլորը գնաց տնակի մոտ՝

Ծուղ-րուղ-ղո՛ւ...

Գալիս եմ վոտքով,

Կարմիր կոշիկով,

Սուր գերանդիով,

Աղվեսին մորթեմ,

Տնից վոնդեմ,

Դուրս կորիր, աղվես։



Աղվեսը լսեց, վախեցավ և ասաց.

— Շորերս եմ հագնում...

Իսկ աքլորը նորից՝

Ծուղ-րուղ-ղո՛ւ...

Գալիս եմ վոտքով,

Կարմիր կոշիկով,

Սուր գերանդիով,

Աղվեսին մորթեմ,

Տնից վոնդեմ,

Դուրս կորիր, աղվես։

Իսկ աղվեսն ասում ե.

— Քուրքս եմ հագնում...

Աքլորը յերրորդ անգամ յերգեց իր յերգը։ Աղվեսը վախեցավ, ցատկեց վառարանի վրայից ու վոնց ե ճղում։ Իսկ նապաստակն աքլորի հետ միասին սկսեցին ապրել խրճիթում և քեֆ քաշել։





ՊՈԶԵՐԸ

Այդ վաղուց ե պատահել: Կենդանիներն այն ժամանակ պոչ չունեյին:

Մի անգամ լուր տարածվեց, թե կենդանիների տերը պոչ ե բաժանելու:

Կենդանիներն ուրախացան, ուրախացավ նաև նապաստակն ու մտածեց՝ «Այ թե մի յերկար, փափուկ պոչ ստանայի»...

Վերջապես յեկավ կենդանիներին պոչ տալու որը: Բոլոր կենդանիներն ել ծեգին վեր կացան -- վախենում եյին հերթը ձեռքից բաց թողնեն:

Նապաստակը դնչիկը հանեց բնից, նայում ե՝ անթիվ-անհամար կենդանիներ են գնում: Վախեցավ նապաստակը, քաշվեց բնի խորքն ու այնտեղից ե նայում:

Առջևից գնում ե փիղը՝ վոնց վոր սար: Հետո վազում ե ձին, -- ճանճերը ձանձրացնում են նրան, բայց ինչո՞վ քշի նրանց: Զիու հետևից գնում ե առյուծը, -- նա ել ե ուզում պոչ ստանալ:

Նապաստակն առյուծին վոր տեսավ, բոլորովին լեղապատառ յեղած ավելի խորացավ իր բնում:

Իսկ այդ ժամանակ աղվեսը վազում եր նապաստակի բնի մոտով: Նապաստակը գլուխը դուրս հանեց բնից ու խնդրում ե աղվեսին.

— Աղվեսիկ, աղվեսիկ, ինչ կլինի՞ ինձ համար մի պոչ բերես:



— Ինքդ արի, ինձ ել ե պոչ հարկավոր:

— Ախր յես փոքր եմ, անուժ, աղվեսիկ, չեմ կարող ձեղքել -- անցնել բաժինս ստանալ:

— Դե լավ, թող այդպես լինի, քեզ համար մի պոչ կբերեմ:

Իսկ աղվեսի հետևից ընդհագալով գալիս ե ծուռ-թաթ արջը:

Արջուկ տատիկ, ի՞նչ կլինի ինձ համար ել մի պոչ բերես, -- խնդրում ե նապաստակը:

— Լավ, լավ, կբերեմ, -- ասում ե արջը:

Իսկ արջի հետևից սնգսնգալով վազում ե գայլը:

Նապաստակը նորից ե խնդրում:


— Գայլուկ քեռի, արի ինձ մի լավություն արա, մի պոչ ջոկիր ինձ համար:

— Լավ, կջոկեմ:

Այսպես բոլորը գնացին, նապաստակը մնաց մենակ ու մտածում ե՝

«Տեսնենք ինձ համար ո՞վ ե լավ պոչ բերելու»:

Իսկ կենդանիները հավաքվել եյին պոչերի մոտ ու սկսել եյին բաժանել իրար մեջ: Ի՞նչ տեսակ պոչեր ասես, վոր չկար այդտեղ. Կային յերկար պոչեր՝ փափուկ ժազով պատած, ուրիշները բարակ եյին և ուղիղ, ինչպես ձեռնափայտ, մի քանիսի ծայրին փնջիկ կար, մյուսների ծայրը վոլորած եր: Կային և այնպիսիները, վորոնք պատած եյին յերկար ու կոշտ մազերով:



Յե՛վ ելի ուրիշ շատ տեսակներ:

Խոնավել եյին կենդանիները, աղմկում էյին, ամեն մեկն ուզում եր լավ պոչ ստանալ:

Աղվեսը բոլորից խորամանկ է և հենց նա ել կարողացավ ձեռք բերել ամենալավ պոչը — դեղին, փափուկ: Գայլն ել լավ պոչ ստացավ: Փիղը, ղե, դանդաղաշարժ է և ահա նրան վատ պոչ ընկավ — ձեռնափայտի նման ուղիղ, տկլոր մաշկով պատած:

Արջին բոլորովին դուրս գցեցին հերթից — համարյա առանց պոչի հեռացավ: Իսկ ձին ուրախ է — նրա պոչը կարծես քանդած հյուս լինի, հիմի նրանով ինչպես է քշում ճանճերին ու բոռերին:

Կենդանիները պոչերն ստացան և գնում են տուն: Ճանապարհին նրանք պոչները թափահարում ու պարծենում են մեկը մյուսի առաջ:

Իսկ նապաստակն իր բնում նստած սպասում է:

Աղվեսը վազում է բնի մոտով:

— Աղվեսիկ, աղվեսիկ, ինձ համար պոչ բերի՞ր:

— Վոչ, չբերի: Կենդանիներն անթիվ — անհամար եյին: Յես ինձ համար ել գոռով ճարեցի:

Մոտիկից անցնում է գայլը:

— Գայլ, գայլ, ինձ համար պոչ ճարեցի՞ր:

— Բանս ու գործս դժւ եյիր... — ասում է գայլը և վազում առաջ:

Ահա գալիս է արջը:

— Արջուկ տատիկ, ինձ համար պոչ ճարեցի՞ր:

Արջը նույնիսկ չնայեց նապաստակի վրա և առաջ գնաց:

Ցավալի յեր նապաստակի դրուժյունը, — բոլոր կենդանիները պոչ ունեյին, մենակ նա յեր անպոչ մնացել: Նստել է նապաստակն ու լաց է լինում: Բայց, ահա նրա մոտով վազում են կատուն ու շունը, վիճում են, թե ում պոչն է լավը: Վիճեցին, վիճեցին և բանը կռվի հասավ: Շունը վրա պրծավ ու պոկեց կատվի պոչի ծայրը: Նապաստակը վրա հասավ, վերցրեց կատվի պոչի կտորն ու պնդե...

Յե՛վ ահա, այդ որվանից մինչև հիմա նապաստակը կատվի պոչի կտորն է կրում:



ՊԱՐԾԵՆԿՈՏ ՆԱՊԱՍՏԱԿԸ

Կար-չկար անտառում մի նապաստակ կար։
Ամառը նա լավ էր ապրում, իսկ ձմեռը՝ քաղցած։

Մի անգամ նա գնաց մի գյուղացու կալ խուրճ
գողանալու, տեսավ այնտեղ արդեն բավականաչափ
նապաստակներ են հավաքվել։ Նա սկսեց պարծե-
նալ նրանց առաջ։

— Իմ բեխերը հո բեխեր չեն, այլ՝ թրեր, իմ թա-
թերը հո թաթեր չեն, այլ՝ ճիրաններ, յես փոչ
փոքից չեմ վախենում։

Նապաստակը նորից գնաց անտառ, իսկ մյուս
նապաստակները պատմեցին մորաքույր ագռավին,
թե նապաստակն ինչպես պարծեցավ։ Ագռավը թը-
ռավ պարծենկոտին փնտռելու։ Գտավ նրան թփի
տակ և ասաց։

— Հապա մի ասա տեսնեմ, դու վո՞նց պարծեցար։

— Իմ բեխերը հո բեխեր չեն, այլ՝ թրեր, իմ
թաթերը հո թաթեր չեն, այլ՝ ճիրաններ, ատամներս
հո ատամներ չեն, այլ՝ դուրեր։

Ագռավը քաշեց նրա աղանջներից և ասաց.

— Տես, ել չպարծենաս։



Նապաստակը վախեցավ և խոստացավ այլևս
չպարծենալ։

Մի անգամ ագռավը կանգնած էր ցանկապատի
վրա։ Հանկարծ շները վրա պրծան ու սկսեցին գրգ-
գրդել նրան։

Նապաստակը տեսավ, թե շներն ինչպես են
ագռավին գողում ու մտածեց՝ հարկավոր է ագռա-
վին ոգնել։ Իսկ շները հենց վոր նապաստակին տեսան,
ագռավին բաց թողեցին ու վազեցին նրա հետևից։
Նապաստակն արագ վախճում էր, իսկ շները վազում
էին նրա հետևից։ Այնքան վազեցին, վոր ուժից
ընկան ու յետ մնացին։

Ագռավը նորից նստել է ցանկապատի վրա, իսկ
նապաստակն արդեն հանգստացած վազեց—յեկավ
նրա մոտ։

— Ճիշտ վոր, — ասաց ագռավը, — դու փոչ թե
պարծենկոտ ես, այլ սրտոտ։



ՎՈՋՆԻՆ ՈՒ ՆԱՊԱՍՏԱԿԸ

Նապաստակը մի որ հանդիպեց վոզնուն ու ասաց.

— Ամեն ինչով լավ ես, վոզնի, բայց վոտներդ ծուռտիկ են, փաթ են ընկնում:

Վոզնին բարկացավ և ասաց.

— Եղ ղում ես ծաղրում դու, իմ ծուռտիկ վոտները քո ուղիղ վոտներից արագ են վազում: Այ, թող մի անգամ տուն գնամ, իսկ հետո յեկ վազենք առաջկտրուկի:

Վոզնին գնաց տուն և կնոջն ասաց.

— Յես նապաստակի հետ վեճի յեմ բռնվել, ուզում ենք իրար հետ վազենք, վոր տեսնենք ու արագ կվազի:

Վոզնու կինն ասաց.

— Ինչպես յերևում ե ցնդվել ես, այ մարդ: Դու վոնց կարող ես նապաստակի հետ վազել: Նրա վոտքերը սրընթաց են, իսկ քոնը՝ ծուռտիկ ու կոպար: Իսկ վոզնին ասում ե.

— Նրա վոտներն են արագնթաց, իմ ել՝ խելքն ե սուր: Դու միայն արա այն ինչ վոր ասեմ. գնանք դաշտը:

Նրանք գնացին վարած դաշտը՝ նապաստակի մոտ: Վոզնին ասաց կնոջը.

— Դու ահոսի այս ծայրին թագնվիր, իսկ յես ու նապաստակը կգնանք արտի մյուս ծայրը և այնտեղից կվազենք դեպի քեզ: Հենց վոր վազեցինք—յես յես կդառնամ ու կթագնվեմ: Նապաստակը քեզ մոտեցավ թե չէ՝ դուրս յեկ ու ասա՝ իսկ յես վաղուց եմ քեզ սպասում: Նա քեզ չի ճանաչի, կ'կարծի թե յես եմ:

Վոզնու կինը թագնվեց ահոսում, արտի մի ծայրին, իսկ վոզնին նապաստակի հետ գնացին արտի մյուս ծայրն ու այնտեղից վազ տվին միասին: Հենց վոր վազ տվին, վոզնին յետ մնաց ու թագ կացավ ահոսում: Նապաստակը սլացավ դեպի արտի մյուս ծայրը այ քեզ բան—վոզնին արդեն նստած ե այնտեղ: Նա տեսավ նապաստակին ու հանգիստ ասաց՝

— Իսկ յես վաղուց եմ քեզ սպասում:

Նապաստակը չճանանչեց վոզնու կնոջը և մտածում ե.

«Սա ի՞նչ հրաշք ե, ախր նա վոնց ինձ անցավ»:

— Դե վոր այդպես ե, արի նորից վազենք,— ասաց վոզնին:

— Արի.

Նապաստակը յետ դարձավ ու ինչքան ուժ ուներ վազեց դեպի արտի մյուս ծայրը:

Այ քեզ բան—վոզնին արդեն նստած ե այնտեղ ու ասում ե.

— Ե՛, ախպերս, նոր ես տեղ հասնում, իսկ յես յերբ եմ տեղ հասել...

«Սա ի՞նչ հրաշք ե,—մտածում ե նապաստակը,— ախր յես շատ արագ վազեցի, բայց ելի նա առաջ ընկավ, ես վոնց յեղավ»...

— Դե արի մի անգամ ել վազենք, ես անգամ արդեն չես կարող առաջս կտրել:

— Վազենք...

Վազեց նապաստակը ինչքան վոր ուժ ուներ, բայց, այ քեզ բան—վոզնին հրեն տեղ ե հասել ու սպասում ե:

Ու այդպես նապաստակն այնքան վազեց ծայրից ծայր, վոր ուժից ընկավ: Նա խոնարհվեց վոզնու առաջ և ասաց, վոր ել յերբեք չի վիճի նրա հետ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0398228

ԳԻՆԸ 1 ՌՈՒՔԼԻ

230

3587

38.14
30

1
9



“ЗАЙКА”
ГИС: АРМ. СС. Р
Г. ЕРЕВАНЬ